

տեսնե՛ վաղեմի եւ ծերունի ճգնաւոր մը՝ մթին փոսի մը եզրը կանգնած...

Արեղային մտամոլոր վիճակը չի վրիպիր գինք շրջապատողներէն. հոյրը լա՛վ կը հասկնայ իրադարձութիւնը, Վանահայրը զարմացում ունի միայն:

Վերջին փորձութեան տեսիլն է աւ: Արեղան մատուռին մէջ կ'աղօթէ. յանկարծ անպարտելիօրէն շլացուցիչ լոյսեր կը ծաթին. հեթանոսական վաղեմի, շենշող, հրճուական խնջոյքն է ի պատիւ Վահագնին, Աստղիկին: Կուգան մարտիկները արշաւանքէ մը յաղթական. կուգան կիներ շքեղ, կենսառոյգ. փոքրիկ աւագաններու մէջէն ոսկեայ թասերով կ'ըմպեն բոսոր գինին մինչ անօթներու հնչական ծիծաղը՝ երգերու կ'ընդխառնի: Կեանքի տոնն է աւ. պայքարինը, անդուլ, անողոք պայքարինը, յաղթութեան եւ հետեւաբար վայելքին: Արեղան կ'ուզէ մասնակցիլ անոր, կը մերժուի, բայց ոսոխումէ մը յետոյ կը բազմի կոչնականներուն մէջ: Կը մարի յանկարծ այս շքեղանքը. խորանին առաջ՝ գետնաթաւալ եւ զգայագիրկ Արեղան կը փոխադրեն սենեակ: Ալ վճռուած է, Արեղան չի կրնար տոկալ այս մենութեանն եւ երաշտի վայրերուն մէջ յառնող անսուրբ սակայն քաղցր սիրոյ հազար երագներուն, կ'առաջանայ դէպի ծո՛վ. Սեդան կը կանչէ գինք, ու անոր կապոյտ ալիքներուն կը յանձնէ իր բեկեալ մարմինը...

Վանահայրը պարապ չէ անդին: Ան ալ իր տառապանքն ունի: Կը կարծէր աշխարհիկ մտածումէ անջատ ու անաղարտ բարձրագոյն խորհրդով մը կանգնած ըլլալ նորաշէն եկեղեցին, մինչ շահախնդիր, մարդկային սիրոյ մը արդիւնքն է եղած. այս եզրակացութեան կը հասնի իշխանուհոյն հետ մէկ երկու տեսակցութենէ ետք: Երբեմն սիրած էին զիրար. բախտը մերժած էր իրենց միութիւնը. Վանահայրը կուսակրօն դարձեր էր, իշխանուհին ամուսնացեր, զաւակներու տէր, բայց հիմա իր ծերութեան օրերուն եկած է վանքին դէմ բնակիլ խորհելու համար իր նախկին սիրահարին վրայ եւ հրճուելու իրենց սիրոյն պտուղը եղող եկեղեցոյն հեռաւոր սիլուէթով...